# «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 429 և 1999 թվականի հունիսի 7-ի թիվ 392 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 429 ԵՎ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 392 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Սեյսմիկ պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական ծրագիրը (այսուհետ Պետական ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների Պետական ծրագրի ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական ու մարզային ծրագրերի

հաստատման ընթացակարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական ծրագրում ներառված միջոցառումների ֆինանսավորման հնարավորության հարցը քննարկել համապատասխան տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» թիվ 429 և ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 7-ի «Երևանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» թիվ 392 որոշումները:
4. 4. Առաջարկել Երևանի քաղաքապետին.

1) ընդունել «Երևանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագիր:

2) Երևան քաղաքի զարգացման ծրագրերում ներառել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ՝ ըստ առաջնահերթության (կարճաժամկետ, միջնաժամկետ և հեռանկարային) և ներկայացնել լիազորված մարմնի համաձայնեցմանը՝ յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնելով տեղեկատվություն.

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ                    ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2018 թվականի

_______ N__ որոշման

**Պ ԵՏԱԿԱՆ   Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ**

1. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման Պետական ծրագրով (այսուհետ` Պետական ծրագիր) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ ռիսկի նվազեցման քաղաքականության հիմնական ուղղությունները:
2. Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի նվազեցումն առանձին, ինքնուրույն և կարևորագույն խնդիր է` հետևյալ գլխավոր պատճառներով`

1) շենքերի և շինությունների սեյսմակայունության զգալիորեն ցածր մակարդակն իրական սեյսմիկ վտանգի մակարդակից.

2) բնակչության ու ղեկավար մարմինների` սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված գործողություններին պատրաստվածության ոչ անհրաժեշտ մակարդակը:

3. Պետական ծրագրի կատարումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների, բոլոր շահագրգիռ պետական մարմինների կողմից` իրենց վերապահված գործառույթների շրջանակներում:

## 1. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

4. Հայաստանի տարածքն ինչպես և անցյալում, կարող է ենթարկվել 7.0 և ավելի մագնիտուդով ուժեղ երկրաշարժի, ինչը համապատասխանում է 9-10 և ավելի բալ ուժգնության` ըստ MSK-64 սանդղակի: Հատուկ Պետական ծրագրով սեյսմիկ ռիսկի մակարդակն զգալիորեն չնվազեցնելու դեպքում զոհերի և կորուստների թիվը կհասնի այնպիսի մակարդակի, որի դեպքում հնարավոր չի լինի արդյունավետ օգնություն ցուցաբերել բնակչությանը և վերացնել ավերածությունները:
5. 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո վերանայվեցին Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ պայմանները, ինչի արդյունքում երկրաշարժից սեյսմիկ ազդեցության գնահատականը բարձրացավ 1-2 բալով: Բազմաբնակարան բնակելի շենքերի գերակշիռ մասը կառուցվել է մինչև 1990 թվականը, և հանրապետությունում սեյսմիկ պայմանների վերանայումից հետո դրանք արդեն իսկ չեն բավարարում ներկայիս գործող սեյսմիկ նորմերի պահանջներին: Այս հանգամանքներով պայմանավորված` կարևորվում է շենքերի ու շինությունների սեյսմակայունությանը և հուսալիությանն ուղղված միջոցառումների հետևողական իրականացումը:

## III. ԾՐԱԳՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿԸ, ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ԼՈՒԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Պետական ծրագրի գլխավոր նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցումը մինչև բնակչության անվտանգությունն ու հանրապետության կայուն զարգացումն ապահովող մակարդակը:
7. Պետական ծրագիրը հիմք է Հայաստանի Հանրապետության համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ ներառելու համար:
8. Պետական ծրագիրն ընդգրկում է երեք հիմնական խնդիրների լուծումը`

1) սեյսմիկ վտանգի գնահատում.

2) սեյսմիկ ռիսկի գնահատում.

3) սեյսմիկ ռիսկի նվազեցում:

9. Սեյսմիկ վտանգի գնահատումը բաղկացած է երկու հիմնական մասերից`

1) առաջնային սեյսմիկ վտանգի գնահատում.

2) երկրորդային սեյսմիկ վտանգի գնահատում:

10. Առաջնային վտանգը գրունտի ցնցումները, ճեղքվածքները, երկրակեղևի խզվածքներն են, այսինքն` երկրաշարժը: Երկրորդային վտանգը երկրաշարժերով պայմանավորված բնական և տեխնածին երևույթներն են:
11. Բնական երևույթների թվում են սողանքները, փլուզումները, սելավները, դիֆերենցված նստվածքները, գրունտի ջրիկացումը, ենթառողողումը: Տեխնածինների թվում են վթարները, հրդեհները:
12. Առաջնային վտանգի գնահատումն ընդգրկում է երկարաժամկետ և ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատումը: Երկարաժամկետ վտանգի գնահատումն առավելագույն հնարավոր ցնցումների տեղի և ուժգնության որոշումն է Հայաստանի Հանրապետության տարածքում` հաջորդաբար աճող մասշտաբների քարտեզներում: Առաջնային վտանգը Հայաստանի Հանրապետության տարածքի համար մանրամասնորեն որոշվում է Հայաստանի Հանրապետության տարածքի, հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների տարածքների սեյսմամիկրոշրջանացման (ՍՄՇ) M=1:5000, M=1:10000 քարտեզների միջոցով:
13. Ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատումը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ նրանից վտանգավոր հեռավորության վրա հնարավոր ուժեղ սեյսմիկ իրադարձության (I≥7 բալ MSK-64 սանդղակով) տեղի, ուժգնության և ժամանակի կանխատեսումն է:
14. Սեյսմիկ ռիսկի գնահատումը համալիր խնդիր է, որի լուծումը պահանջում է նկատի ունենալ բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Այդ խնդրի լուծման համար կազմվում են մարզերի և բնակավայրերի տարածքների սեյսմիկ ռիսկի տարբեր մասշտաբների

քարտեզներ: Սեյսմիկ ռիսկի ճիշտ գնահատումը թույլ կտա մշակել դրա նվազեցման արդյունավետ միջոցառումների ծրագրեր: Սեյսմիկ ռիսկի գնահատումը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը`

1) շենքերի և շինությունների խոցելիության գնահատում երկրաշարժի տարբեր սցենարների դեպքում.

2) հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների` սեյսմիկ խոցելիության գնահատում.

3) երկրաշարժի տարբեր սցենարների դեպքում մարդկային կորուստների գնահատում.

4) երկրորդային սեյսմիկ վտանգով պայմանավորված` բնական և տեխնածին երևույթների ռիսկի գնահատում.

5) բնակավայրի ենթակառուցվածքների (ջրագծեր ու կոյուղագծեր, էլեկտրամատակարարման 6 կՎ ու ավելի լարման գծեր, գազամատակարարման միջին ճնշման գծեր և այլն) սեյսմիկ ռիսկի գնահատում.

6) բնակավայրի կենսաապահովման արտաքին գծերի (ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, հեռախոսային կապի, երկաթուղու, ավտոճանապարհների և այլն) սեյսմիկ խոցելիության գնահատում.

7) բնակավայրի տարածքի սեյսմիկ ռիսկի գնահատում.

8) սեյսմիկ ռիսկի նվազեցման կոնկրետ առաջարկները ներկայացնելը:

15. Սեյսմիկ ռիսկի նվազեցումը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը`

1) ռիսկի նվազեցման համար իրավական հիմք ապահովող նորմատիվ փաստաթղթերի ընդունում.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարման կենտրոնի ստեղծում.

3) վաղ ահազանգման համակարգի ստեղծում.

4) Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ խոցելիության նվազեցման` ֆինանսավորմամբ ապահովված միջնաժամկետ ծախսային ծրագրերի (տիպային բնակելի, դպրոցների, առողջապահական հիմնարկների և այլ շենքերի) մշակում ու իրականացում, որը ներառի վտանգի մակարդակին համապատասխան շենքերի ու շինությունների սեյսմակայունության բարձրացումը, ենթակառուցվածքների ու կենսաապահովման գծերի սեյսմիկ խոցելիության նվազեցումը, արդյունավետ հողօգտագործումը.

5) տիպային, մեծ քանակ կազմող շենքերի ուժեղացման նոր, էժան ու

արդյունավետ տեխնոլոգիաների ընտրում, տեղայնացում ու մշակում, այդ թվում՝ գործարանային արտադրության կոնստրուկցիաների կիրառմամբ.

6) երկրաշարժի երկրորդային հետևանքների (հրդեհներ, սողանքներ, թունավոր նյութերի արտանետումներ մթնոլորտ ու ջրային միջավայր, հնարավոր համաճարակներ, երկաթուղու և գլխավոր ճանապարհների շարքից դուրս գալը, վնասվածքներ և այլն) նվազեցումը.

7) Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ ռիսկի աճի կանխման երկարաժամկետ ծրագրի մշակում, որում կարտացոլվեն վտանգավոր օբյեկտների ապակենտրոնացումը քաղաքներից, քաղաքների մեխանիկական աճի, հետևաբար նաև սեյսմիկ ռիսկի աճի, կանխումը.

8) բնակչության նախապատրաստում (ուսուցում և վարժանքներ).

9) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների նախապատրաստում ռիսկի կառավարմանը.

10) բժշկական պատրաստվածության բարձրացում.

11) արագ արձագանքման ուժերի զարգացում.

12) փրկարարների պատրաստվածության ապահովում.

13) ապահովագրության համակարգի ստեղծում.

14) բնակչության արտահոսքի կանխում:

## 1. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Պետական ծրագրի իրականացումը կտա հետևյալ հիմնական արդյունքները՝

1) կկազմավորվի նոր հեռանկարային երկարաժամկետ պետական քաղաքականություն՝ բնակչության անվտանգությանը և Հայաստանի Հանրապետության կայուն զարգացմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցում.

2) կստեղծվի պլանավորված, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից համակարգվող Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համակարգ, որը կիրականացվի պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, այսինքն՝ գործնականում ամբողջ հասարակության հետ համատեղ, ինչը համապատասխանում է այս բարդագույն խնդրի լուծման միջազգային մոտեցմանը.

3) կբարձրանա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ընդհանուր պատրաստվածությունն ուժեղ ցնցումների և աղետների նկատմամբ.

4) նախադրյալներ կստեղծվեն սեյսմիկ ռիսկը նվազեցված տնտեսության մեջ խոշոր ֆինանսական ներդրումների համար.

5) կընդգրկվեն սեյսմիկ ռիսկի նվազեցման նորագույն տեխնոլոգիաներ.

6) բոլոր ուղղություններով՝ սեյսմիկ վտանգի կանխատեսումից մինչև սեյսմակայուն շինարարություն և բնակչության նախապատրաստում, նոր տեխնոլոգիաների ներդնում, ինչը հնարավոր կլինի օգտագործել պետության գործունեության բոլոր մնացած ոլորտներում.

7) կբարելավվեն տեխնիկական բազան և գիտելիքների բազան ապահովագրության, գիտության և տեխնիկայի զարգացման համար:

17. Նշված ակնկալվող արդյունքները կարող են ձեռք բերվել միմյանց լրացնող ծրագրերի մշակման և իրականացման միջոցով՝ երեք հիմնական ուղղություններով՝

1) սեյսմիկ վտանգի գնահատման բնագավառում՝

ա. ազգային դիտացանցի, ինչպես նաև տվյալների հավաքման, մշակման և վերլուծության հետագա զարգացում,

բ. տվյալների բազայի և գիտելիքների բազայի հետագա զարգացում, սեյսմիկ վտանգի կանխատեսում՝ փորձագիտական համակարգերի և աշխարհագրական տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ԱՏՀ) հիման վրա և դրա քարտեզագրում,

գ. Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը, շահագրգիռ պետական մարմիններին և բնակչությանը կանխատեսման տեղեկատվության փոխանցման կանոնակարգի մշակում լիազոր մարմնի կողմից և ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ հաստատման.

2) սեյսմիկ ռիսկի գնահատման բնագավառում՝

ա. տվյալների բազայի և գիտելիքների բազայի ստեղծում և զարգացում,

բ. ռիսկի ամբողջական, բազմագործոնային վերլուծություն,

գ. սեյսմիկ ռիսկի քարտեզագրում ԱՏՀ-ի հիման վրա.

3) սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում՝

ա. Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքով հնարավոր ուժեղ երկրաշարժի դեպքում վաղ ահազանգման համակարգի ստեղծում,

բ. Հայաստանի Հանրապետության տարածքի խոցելիության նվազեցում՝ գոյություն ունեցող շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման, քաղաքաշինական նորմերի հիման վրա նոր սեյսմակայուն շինարարության, սողանքավտանգ և նստվածքավտանգ տեղամասերի արդյունավետ պաշտպանական ինժեներական կառուցվածքների ստեղծման, հանրապետության տարածքի ինժեներական պաշտպանության գծով, այլ միջոցառումների միջոցով,

գ. բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացում՝ հատուկ հեռուստառադիոհաղորդումների կազմակերպման, համապատասխան գրականության և ձեռնարկների լույսընծայման և տարածման, երկրաշարժից առաջ, ընթացքում և հետո բնակչության գործողությունների վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակման և օգտագործման, տարբեր տարիքային խմբերի մարդկանց հոգեբանական նախապատրաստման, օգնություն ցուցաբերելու անհատական և կոլեկտիվ միջոցների ուսուցման, Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներում բնակչությանը երկրաշարժերից և դրանց հետ կապված երկրորդային աղետներից պաշտպանությունն ուսուցանող պատրաստված հրահանգիչների ցանցի ստեղծման, ուսումնական տագնապների անցկացման միջոցով: Բոլոր թվարկված ծրագրերն իրականացվում են բնակչության տարբեր շերտերի համար՝ հասարակության յուրաքանչյուր շերտին առանձնահատուկ մոտեցում կիրառելով,

դ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների նախապատրաստում ռիսկի կառավարմանը՝ ուժեղ երկրաշարժի կամ դրա վտանգի դեպքում գործողությունների վերաբերյալ մեթոդական նյութերի մշակման, ուժեղ երկրաշարժի կամ դրա վտանգի դեպքում որոշումներ ընդունելու վերաբերյալ գործնական պարապմունքների անցկացման սցենարի մշակման, կառավարման մարմինների ղեկավար աշխատողների նախապատրաստման և վերապատրաստման ուսումնական բազայի կատարելագործման և այլնի միջոցով,

ե. բժշկական պատրաստվածության բարձրացում՝ աղետների բժշկության տեղեկատվական-կառավարման ավտոմատացված ծրագրի մշակման և ներդրման, հանրապետության մակարդակով աղետների բժշկության ծառայության զարգացման ծրագրի մշակման և ներդրման, հնարավոր սանիտարական կորուստների (զոհվածների և վիրավորների) ռիսկի գնահատման նպատակով երկրաշարժերի դեպքում վնասվածքների առանձնահատկությունների վերլուծության, երկրաշարժերի հետևանքների վերացման համար անհրաժեշտ միջոցներն ու ուժերն արտացոլող բժշկական-աշխարհագրական քարտեզների մշակման միջոցով,

զ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության մասնագիտական փրկարարական նյութատեխնիկական բազայի և հանդերձավորման հետագա զարգացում,

է. բնակչության արտագաղթի կանխում՝ երկրաշարժերի դեպքում առաջին անհրաժեշտության ենթակառուցվածքների կայուն գործունեության ապահովման ծրագրի մշակման միջոցով,

ը. անձի հոգեբանական խոցելիության նվազեցում՝ համապատասխան միջազգային կազմակերպություններից տեղեկատվության հավաքման, Հայաստանի Հանրապետության պայմաններում սթրեսի հաղթահարման մեթոդների մշակման, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսուցողական ծրագրերի մշակման միջոցով: Պետական ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրացնելու ուժեղ երկրաշարժերին Հայաստանի Հանրապետության բնակչության պատրաստվածության մակարդակը, ինչը, իր հերթին, երկրաշարժերի հետևանքների վերացման ծախսերի նվազեցման միջոցով կհանգեցնի Հայաստանի Հանրապետության առավել կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը:

18. Պետական ծրագրի իրականացման ընթացքում դրական տեղաշարժեր ձեռք կբերվեն նաև հետևյալ ուղղություններով՝

1) շրջակա միջավայրի վիճակի բարելավում և դրա պահպանություն.

2) հասարակական կազմակերպությունների ակտիվացում և ընդգրկում ընդհանուր կառավարման համակարգում.

3) երեխաներին կենսականորեն անհրաժեշտ հմտությունների ուսուցման և վարժանքների կազմակերպում.

4) հաշմանդամների բժշկասոցիալական վերականգնում, նրանց ընդգրկումն ընդհանուր կառավարման համակարգում:

## 1. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

19. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը Պետական ծրագրի պատասխանատու կատարողն ու համակարգողն է:
20. Առաջարկել համայնքների ղեկավարներին՝

1) մասնակցել համայնքի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում տարվող աշխատանքների կազմակերպմանը,

2) ապահովել համայնքի տարածքում ուժեղ երկրաշարժերին բնակչությանը նախապատրաստելու աշխատանքները,

3) աջակցել համայնքի տարածքում սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի կատարմանը:

21. Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման ռազմավարության հիմքում ընկած են հետևյալ հիմնական սկզբունքները՝

1) պատրաստվածության գերակայությունը վերականգնման նկատմամբ.

2) պատրաստվածության ոլորտում սեյսմիկ ռիսկի նվազեցման բոլոր տարրերի հավասար գերակայությունը.

3) Պետական ծրագրի իրականացման գործընթացում պետական մարմինների, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և ընդհանրապես հասարակության մասնագիտաբար համակարգվող ջանքերի միասնականությունը.

4) սեյսմիկ ռիսկի նվազեցման հիմնախնդրի բոլոր ուղղություններով ենթածրագրերի զուգահեռ իրականացումը.

5) Պետական ծրագրի միջազգայնացումը` դրա իրականացման մեջ լավագույն միջազգային և ազգային կենտրոնների ընդգրկման միջոցով.

6) օտարերկրյա դոնորների և ներդրողների ընդգրկումը Պետական ծրագրի տարբեր ենթածրագրերի ֆինանսավորման համար.

7) Պետական ծրագրի բազմափուլային բնույթը` կազմված կարճաժամկետ (մինչև 1 տարի), միջնաժամկետ (մինչև 5 տարի) և երկարաժամկետ (մինչև 20 տարի) ենթածրագրերից, որոնք իրականացվում են տարբեր պետական մարմինների կողմից:

22. Պետական ծրագրի իրականացմանը մասնակցում են Հայաստանի Հանրապետության տարբեր հասարակական կազմակերպություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված գործառույթների շրջանակներում:
23. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունները մասնակցում են սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված Հայաստանի Հանրապետության տարածքի և նրա համայնքների զարգացման հեռանկարային ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին:
24. Անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը կարող է արտաբյուջետային միջոցների հաշվին Պետական ծրագրի տարբեր բաժինների իրականացման համար ներգրավել տարբեր օտարերկրյա փորձագետների:
25. Պետական ծրագրի իրականացումը կբարձրացնի ուժեղ երկրաշարժերին Հայաստանի Հանրապետության բնակչության պատրաստվածության մակարդակը: Դա, իր հերթին, կհանգեցնի սեյսմիկ ռիսկի զգալի նվազեցմանը, ինչը, ընդհանուր առմամբ, կապահովի հասարակության կայուն սոցիալ-տնտեսական զարգացումը:

1. **ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ**

26. Պետական ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, համայնքային բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

26.1 ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը նպաստում է օտարերկրյա դոնորների և ներդրողների ընդգրկմանը Պետական ծրագրի տարբեր ենթածրագրերում:

## VII. ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԸ

27. Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության փոփոխությունը Հայաստանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման Պետական ծրագրի առաջնահերթության նկատմամբ, Պետական ծրագրի իրականացման համար դոնորների բացակայությունը:

## VIII. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

28. Պետական ծրագրի իրականացման համար հաշվետվությունը ներկայացվում է հետևյալ ընթացակարգերով՝

1) Պետական ծրագրի կատարողների կողմից յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություն է ներկայացվում Պետական ծրագրի համակարգողին: Պետական ծրագրի համակարգողը յուրաքանչյուր տարին մեկ անգամ արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացնում պատվիրատուին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Արդյունքների մասին տեղեկատվությունն ընդգրկվում է սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիազորված մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստի ամենամյա հաղորդման մեջ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է պահանջել լրացուցիչ հաշվետվություն՝ դրա մասին իր քննարկումից առնվազն երեք ամիս առաջ տեղեկացնելով Պետական ծրագրի համակարգողից:

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2018 թվականի

______N __ որոշման

**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ**

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ**

| **Անմիջական նպատակները** | **Արդյունքները** | **Միջոցառումները** | Ծրագրի կատար |
|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | 4 |
| **Անմիջական նպատակ 1**<br><br>Սեյսմիկ վտանգի գնահատում | 1.1. Արդյունք 1<br><br>Սեյսմիկ վտանգի և դրա հետ կապված երկրորդային վտան-գավոր երևույթների գնահատում | 1.1.1. Միջոցառում 1<br><br>Սեյսմիկ վտանգի և դրա հետ կապված այլ երկրորդային վտանգների մոնիթորինգ | ՀՀ ԱԻՆ |
| | | 1.1.2. Միջոցառում 2<br><br>Տվյալների հավաքման ու վերլուծության գոյություն ունեցող համակարգի զար-գացում և կատարելագործում | ՀՀ ԱԻՆ |
| | | 1.1.3. Միջոցառում 3<br><br>Սեյսմիկ վտանգի վերաբերյալ ստեղծված տվյալների բազայի համալրում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ համ<br>(համաձայնությա<br>ՀՀ ԳԱԱ (համաձ<br>ՀՀ ՏԿՏՏՆ, ՀՀ Է<br>կառավարությա |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | միջուկային անվ<br>կարգավորման ս<br>կոմիտե, ՀԱԷԿ<br>(համաձայնությա<br>ԷԵԲՊՆ ջրային կ |
| | | 1.1.4. Միջոցառում 4<br><br>Համապատասխան փոր-<br>ձագիտական համակարգերի<br>մշակում՝ սեյսմիկ վտանգի և<br>դրա հետ կապված հնարա-<br>վոր աղետների կանխատես-<br>ման համար<br><br>(գիտական ուղղվածություն<br>ունեցող աշխատանքներ են) | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԳԱԱ<br>նությամբ),<br><br>ՀՀ ԷԵԲՊՆ, ՀՀ կ<br>թյանն առընթեր<br>անվտանգությա<br>վորման<br><br>պետական կոմի<br><br>ՀԱԷԿ (համաձայ |
| | | 1.1.5. Միջոցառում 5<br><br>Ազգային դիտացանցի կապի<br>համակարգի ընդլայնում և<br>կատարելագործում տարբեր<br>հիերարխիային մակար-<br>դակներով | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՏԿՏ |
| | | 1.1.6. Միջոցառում 6<br><br>Սեյսմիկ իրադարձության<br>նախանշանների և ուժեղ<br>երկրաշարժի միջև<br>օրինաչափությունների<br>հաստատում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԳԱԱ<br>նությամբ) |

| **1** | **2** | **3** | 4 |
|---|---|---|---|
| | | 1.1.7. Միջոցառում 7<br><br>Սեյսմիկ շրջանացման մեթոդիկայի վերամշակում և լրացում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՔԿ,<br>(համաձայնությ |
| | | 1.1.8. Միջոցառում 8<br><br>Սեյսմիկ վտանգի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ քարտեզագրում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ համ<br><br>(համաձայնությ<br>ՀՀ ՏԿԶՆ |
| | | 1.1.9. ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանը, շահագրգիռ պետական մարմիններին և բնակչությանը ուժեղ երկրաշարժի կանխատեսման տեղեկատվության փոխանցման կանոնակարգի մշակում | ՀՀ ԱԻՆ |
| **Անմիջական նպատակ 2.**<br><br>Սեյսմիկ ռիսկի գնահատում | 2.1. Արդյունք 1<br>Սեյսմիկ ռիսկի քարտեզներ | 2.1.1. Միջոցառում 1<br><br>Սեյսմիկ ռիսկի տվյալների բազայի համալրում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՔԿ,<br>ԳԱԱ (համաձանո<br>ՏԿՏՏՆ, ՀՀ ԷԵԲ<br>կառավարությա<br>միջուկային անվ<br>կարգավորման<br>կոմիտե, ՀԱԷԿ<br>(համաձանությա<br>ՀՀ ԷԵԲՊՆ ջրայի |

| **1** | **2** | **3** | 4 |
|---|---|---|---|
| | | | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԳԱԱ<br>նությամբ) |
| | | 2.1.2. Միջոցառում 2<br><br>ԱՏՀ-ի (GIS) բազայի հիման վրա սեյսմիկ ռիսկի ծրագրերի փաթեթի մշակում և կատարելագործում (գիտական ուղղվածություն ունեցող աշխատանքներ են) | ՀՀ համայնքներ<br><br>(համաձայնությ |
| | | 2.1.3. Միջոցառում 3<br><br>ՀՀ համայնքների տարածք-ների տեղագրական գծագրե-րի կազմում` յուրաքանչյուր օբյեկտի նախագծային սեյս-մակայունության նշումով | ՀՀ ԱԻՆ |
| | | 2.1.4. Միջոցառում 4<br><br>ՀՀ համայնքներում շենքերի և շինությունների փաստացի տեխնիկական վիճակի և վնասվածության աստիճանի հայտնաբերման նպատակով հետազննման իրականացում և փաստացի սեյսմա-կայունության որոշում | ՀՀ համայնքներ<br><br>(համաձայնությ<br>ՀՀ ԱԻՆ |
| | | 2.1.5. Միջոցառում 5 | |

| **1** | **2** | **3** | 4 |
|---|---|---|---|
| | | Ռիսկի հաշվարկ և քարտեզագրում:<br><br>Հատուկ և կարևոր օբյեկտների խոցելիության գնահատում, խոցելի օբյեկտների նվազեցման ծրագրի մշակում և հաստատում ՀՀ կառավարության կողմից: Դպրոցների, հիվանդանոցների և այլ ուսումնական ու առողջապահական հաստատությունների խոցելիության գնահատում, խոցելի շինությունների նվազեցման ծրագրի մշակում և հաստատում ՀՀ կառավարության կողմից:<br>Բազմաբնակարան շենքերի - խոցելիության գնահատում, խոցելի շենքերի նվազեցման ծրագրի մշակում և հաստատում ՀՀ կառավարության կողմից | ՀՀ ԱԻՆ, ՀՀ համ<br><br>(համաձայնությ |
| **Անմիջական նպատակ 3**<br><br>Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցում | 3.1. Արդյունք 1<br>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն | 3.1.1. Միջոցառում 1<br><br>Հայաստանի Հանրապետության համայնքների, սույն ծրագրի կատարողների և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության միջև կապի արդյունավետ միջոցների մշակում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՏԿՏ<br><br>ՀՀ համայնքներ<br><br>(համաձայնությ |
| | | 3.1.2. Միջոցառում 2<br><br>Հայաստանի Հանրապետության պայմաններում սեյսմիկ հնարավոր աղետի մասշտաբների և բնույթի գնահատման նորագույն տեխնոլոգիաների կիրառումը՝ փրկարարական և վերականգնողական աշխատանքների համար ուժերի և միջոցների բաշխման վերաբերյալ որոշումներ ընդունելու նպատակով | ՀՀ ԱԻՆ ՓԾ |

| **1** | **2** | **3** | 4 |
| --- | --- | --- | --- |
| | | 3.1.3. Միջոցառում 3<br><br>Սեյսմիկ ռիսկի նվազեցման բաղադրիչների վերաբերյալ տվյալների բազայի համալրում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱԻՆ մայնքներ (համա թյամբ), ՀՀ ՔԿ, Հ ԳԱԱ (համաձայն ՏԿՏՏՆ, ՀՀ ԷԵԲՊ Հայկական կարս ընկերություն (համաձայնությ |
| | 3.2. Արդյունք 2 Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքով ուժեղ երկրաշարժի դեպքում վաղ ահազանգման համակարգի ստեղծում | | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՏԿՏՏ |
| | | 3.2.1. Միջոցառում 1<br><br>Ուժեղ երկրաշարժի վաղ ահազանգման համակարգի նախագծի մշակում: | |
| | | 3.2.2. Միջոցառում 2<br><br>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի ազգային դիտացանցի արդիականացում՝ Հայաստանի Հանրապետության վաղ ահազանգման համակարգում օգտագործելու նպատակով | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՏԿՏՏ |
| | | 3.2.3. Միջոցառում 3<br><br>Վաղ ահազանգման | ՀՀ ԱԻՆ |

| **1** | **2** | **3** | 4 |
|---|---|---|---|
| | | համակարգի համար ծրագրերի փաթեթի մշակում | |
| | | 3.2.4. Միջոցառում 4<br><br>Վաղ ահազանգման համակարգի համար ազդանշանային ցանցի ստեղծում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ համ<br>(համաձայնությ<br><br>ՀՀ ՏԿՏՏՆ |
| | 3.3. Արդյունք 3 Երկրաշարժերի նկատմամբ Հայաս-տանի Հանրապե-տության տարածքում շենքերի և շինությունների, կենսաապահովման գծերի և բնակավայ-րերի ենթակառուց-վածքի նվազեցված խոցելիություն | 3.3.1. Միջոցառում 1<br><br>Ուժեղ երկրաշարժի նկատմամբ տարածքների խոցելիության նվազեցման ծրագրերի մշակում | ՀՀ մարզպետար<br>համայնքներ<br><br>(համաձայնությ<br><br>ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՔԿ, |
| | | 3.3.2. Միջոցառում 2<br><br>Հայաստանի Հանրա-պետության համայնքների սեյսմիկ միկրոշրջանացում` հաստատված մեթոդիկայի պահանջների համաձայն | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՔԿ, |
| | | 3.3.3. Միջոցառում 3<br><br>Գրունտների ուժեղ շարժման տվյալների բանկի համալրում, Հայաստանի Հանրապե-տության տարածքի տարբեր գրունտային պայմանների | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԳԱԱ<br>նությամբ) |

| **1** | **2** | **3** | 4 |
| --- | --- | --- | --- |
| | | համար թույլ ու միջին երկրա-շարժերի սինթեզված ակսելերոգրամների ստացում | |
| | | 3.3.4. Միջոցառում 4<br><br>Շրջակա միջավայրի վրա ուժեղ երկրաշարժերի ազդե-ցության գնահատման մեխանիզմի մշակում և կիրառում | |
| | | 3.3.5. Միջոցառում 5<br><br>Շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման տեխնոլոգիա-ների կատարելագործում և կիրառում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապե-տության կառուցապատման առանձնահատկությունները (գիտական ուղղվածություն ունեցող աշխատանքներ են) | ՀՀ ԳԱԱ (համաձ<br>ՀՀ ԲՆ, ՀՀ ԱԻՆ, Հ<br>ԷԵԲՊՆ ջրային կ<br><br>ՀՀ ՔԿ, ՀՀ<br>մարզպետարան<br><br>ՀՀ համայնքներ<br><br>(համաձայնությ<br><br>ՀՀ ԱԻՆ |
| | | 3.3.6. Միջոցառում 6<br><br>Ուժեղ երկրաշարժերով պայ-մանավորված վտանգավոր տեղային երկրաբանական և հիդրոերկրաբանական պրո-ցեսներից Հայաստանի Հան-րապետության բնակելի-քա-ղաքացիական ու արտադրա-կան օբյեկտների, տրանսպոր-տային մայրուղիների (ճանա-պարհների և երկաթգծերի), ինչպես նաև կենսաապահով- | ՀՀ ԳԱԱ<br><br>(համաձայնությ<br><br>ՀՀ ՔԿ, ՀՀ ԲՆ, ՀՀ<br>տարաններ,<br><br>ՀՀ համայնքնե<br>նությամբ),<br><br>ՀՀ ԱԻՆ, |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | ման օբյեկտների ինժենե-րական պաշտպանության մեթոդների մշակում և կիրառում (գիտական ուղղվածություն ունեցող աշխատանքներ են) | |
| | 3.4. Արդյունք 4<br>Հնարավոր աղետ-ների կանխման նպա-տակով սեյսմիկ վտանգի և սեյսմիկ ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ բնակչու-թյան տեղյակության մշակված համալիր ծրագիր | 3.4.1. Միջոցառում 1<br><br>Բնակչության տարբեր շերտերի համար ուսուցո-ղական ծրագրերի մշակում և ներդրում՝ առաջատար երկրների փորձի օգտագործ-ման և Հայաստանի պայման-ների համար հարմարեցման միջոցով | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՏԿԶ<br>մարզպետարան<br><br>ՀՀ  համայնքներ<br><br>(համաձայնությ |
| | | 3.4.2. Միջոցառում 2<br><br>Ուժեղ երկրաշարժերին պատրաստվածության<br><br>բնագավառում ուսուցիչների և դասավանդող անձնակազմի նախա-պատրաստում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՏԿԶ<br>մարզպետարան<br>համայնքներ (հա<br>նությամբ) |
| | | 3.4.3. Միջոցառում 3<br><br>Ուսուցողական տեսահոլո-վակների և տեսաֆիլմերի ստեղծում կենտրոնական և շրջանային հեռուստաալիք-ներով ցուցադրելու համար | ՀՀ ԱԻՆ, «Արտա<br>հեռուստահաղոր<br><br>(համաձայնությ<br><br>ՀՀ ԿԳՆ, ՀՀ մար |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | ներ, ՀՀ համայնք<br>(համաձայնությ |
| | | 3.4.4. Միջոցառում 4<br><br>Բնակչության համար ազգային և տեղական ռադիո-հեռուստաալիքներով հաղոր-դումների ստեղծում | ՀՀ ԱԻՆ, «Արտա<br>հեռուստահաղոր<br>(համաձայնությ<br>ՀՀ մարզպետար<br>համայնքներ (հա<br>նությամբ) |
| | 3.5. Արդյունք 5 Ուժեղ երկրաշարժի կամ դրա իրական վտան-գի պայմաններում կառավարման բազմակողմա-նի ուսուցողական ծրագրի մշակում՝ պետական կառա-վարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար աշխատող-ների ուսուցման հա-մար | 3.5.1. Միջոցառում 1<br><br>Ուսուցողական դասըն-<br><br>թացների, հատուկ հե-ռուստ առադիոհաղոր-դումների կազմակերպում՝ ռիսկի կառավարման բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակա-ռավարման մարմինների ղեկավար աշխատողների ուսուցման նպատակով: Բնակչությանը երկ-րաշարժերից և դրա հետ կապված երկրորդային ա-ղետներից պաշտպանու-թյան ուսուցողական դասընթաց-ների կազմակերպում, ուսուցանող հրահանգիչների պատրաստում | ՀՀ ԱԻՆ «ՍՊՏԾ»<br>ԱԻՆ «ՃԿՊԱ» ՊՈ<br><br>ՀՀ մարզպետար<br><br>ՀՀ համայնքներ<br><br>(համաձայնությ<br><br>«Արտակարգ ալի<br>հեռուստահաղոր<br>(համաձայնությ |
| | | 3.5.2. Միջոցառում 2<br><br>Աղետների կառավարման վերաբերյալ տեսաֆիլմերի ստեղծում և դրանց օգտա-գործում ուսուցողական ծրագրերում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ համ<br><br>(համաձայնությ<br><br>«Արտակարգ ա<br>հեռուստահաղոր<br>(համաձայնությ |

| **1** | **2** | **3** | 4 |
| --- | --- | --- | --- |
| | | 3.5.3. Միջոցառում 3<br><br>Վարժանքների ձևով գործնա-կան պարապմունքների կազ-մակերպում, կոնկրետ արտակարգ իրավիճակների վերլուծություն և աղետների կառավարման բնագավառում որոշումների ընդունման գործընթացի մշակում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱՆ |
| | 3.6. Արդյունք 6<br><br>Բարձր բժշկական պ ատրաստվածու-թյուն | 3.6.1. Միջոցառում 1<br><br>Կառավարման տեղեկա-տվական համակարգի մշակում՝ աղետների բժշկության ծառայության համար | ՀՀ ԱԻՆ, ՀՀ մար<br>ներ, ՀՀ ԱՆ |
| | | 3.6.2. Միջոցառում 2<br><br>Հիմնական օրենսդրական և նորմատիվ իրավական փաստաթղթերի ստեղծում՝ պետական ահազանգման համակարգի և աղետների բժշկական հետևանք-<br><br>ների վերացման համար | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱՆ |
| | | 3.6.3. Միջոցառում 3<br><br>Բժշկական և ոչ բժշկական մասնագետների պատ-րաստում առաջին բուժօգնություն ցույց տալու համար | |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱՆ |
| | | 3.6.4. Միջոցառում 4<br><br>Ուժեղ երկրաշարժերի դեպքում հնարավոր սանիտարական կորուստների ռիսկի կանխատեսում | |
| | | | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱՆ |
| | | 3.6.5. Միջոցառում 5<br><br>Շարժական ավտոնոմ ստորաբաժանումների ստեղծում` աղետի օջախում մասնագիտացված բժշկական օգնություն ցույց տալու համար | |
| | | | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱՆ |
| | 3.7. Արդյունք 7 Հայաստանի Հանրա-պետության արտա-կարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության գո-յություն ունեցող հիմքի վրա ձևա-վորված արագ արձագանքման ուժեր | 3.7.1. Միջոցառում 1<br><br>Արագ արձագանքման ուժերի ձևավորման վե-րաբերյալ նորմատիվ փաստաթղթերի ստեղծում | ՀՀ ԱԻՆ ՓԾ |
| | | 3.7.2. Միջոցառում 2<br>Աղետների դեպքում արագ արձագանքման ուժերի կոորդինացման վերաբերյալ մեթոդական նյութերի | ՀՀ ԱԻՆ ՓԾ |

| **1** | **2** | **3** | 4 |
|---|---|---|---|
| | | մշակում | |
| | | 3.7.3. Միջոցառում 3<br><br>Արագ արձագանքման ուժերի ուսումնամեթո-դական բա-զայի ամրացում և դրանց ապահովում կապի ժամանա-կակից միջոցներով | ՀՀ ԱԻՆ, ՀՀ մարզպետարան |
| | 3.8. Արդյունք 8 Շարժական փրկա-րարական ծառայու-թյունների ցանց | 3.7.4. Միջոցառում 4<br><br>Արագ արձագանքման ուժերի անձնակազմի պատրաստման համալիր ուսուցողական ծրագրի ստեղծում | ՀՀ ԱԻՆ ՓԾ |
| | | 3.8.1. Միջոցառում 1<br><br>Որոնողական-փրկարա-րական ջոկատների գործողությունների կոորդինացման կենտրոնի ստեղծման վերաբերյալ ծրագրի մշակում | ՀՀ ԱԻՆ ՓԾ |
| | | 3.8.2. Միջոցառում 2<br><br>Որոնողական-փրկարա-րական ջոկատների աշ-խատանքը համակարգող նորմատիվ փաստաթղթերի մշակում | ՀՀ ԱԻՆ ՓԾ |

| **1** | **2** | **3** | 4 |
|---|---|---|---|
| | | 3.8.3. Միջոցառում 3<br><br>Որոնողական-փրկարարական ջոկատների տեխնիկական բազայի և հանդերձավորման նորացում | ՀՀ ԱԻՆ ՓԾ,<br><br>ՀՀ համայնքներ<br><br>(համաձայնությ |
| | | 3.8.4. Միջոցառում 4<br><br>Փրկարարների նախապատրաստման ուսուցողական ծրագրերի մշակում և ներդրում | ՀՀ ԱԻՆ ՓԾ |
| | 3.9. Արդյունք 9 Աղետներից ապահովագրության կառուցվածք | 3.9.1. Միջոցառում 1<br><br>Ապահովագրության համար իրավական հիմքի մշակում՝ ապահովագրական գործունեության զարգացման և ակտիվացման համար ֆինանսական բազայի և ենթակառուցվածքի ստեղծման համար | ՀՀ ՖՆ, ՀՀ ԱԻՆ |
| | 3.10. Արդյունք 10 Աղետի գոտուց բնակչության արտագաղթի կանխ- ման միջոցառումների համալիր | 3.10.1. Միջոցառում 1<br><br>Աղետների ենթակա Հայաստանի Հանրապետության տարածքի խոցելիության նվազեցման ծրագրերի մշակում | |

| **1** | **2** | **3** | 4 |
|---|---|---|---|
| | | 3.10.2. Միջոցառում 2 Աղետների ենթարկված բնակավայրերի տարածքների խոցելիության նվազեցման ծրագրերի մշակում (տարածքների ինժեներական պաշտպանության, անտառապաշտպանության գոտիների և այլնի վերաբերյալ միջոցառումներ) | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱԻՆ<br>մայնքներ (համա<br>նությամբ)<br><br>ՀՀ ՔԿ, ՀՀ ՏԿԶՆ<br><br>ՀՀ մարզպետար<br>համայնքներ<br><br>(համաձայնությ<br><br>ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱԻՆ |
| | | 3.10.3. Միջոցառում 3<br><br>Բնակչության արտագաղթի մոնիթորինգի համար տեղեկատվական ցանցի ստեղծում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՏԿԶ<br><br>ՀՀ մարզպետար<br><br>ՀՀ համայնքներ<br><br>(համաձայնությ |
| | | 3.10.4. Միջոցառում 4<br><br>Համայնքների հատակագծային կառուցվածք-ների ճշգրտում | ՀՀ ՔԿ, ՀՀ ՏԿԶՆ,<br>տարաններ,<br><br>ՀՀ համայնքներ<br><br>(համաձայնությ |
| | 3.11. Արդյունք 11 Բնակչության և բնակչությանն օգնություն ցույց տվող անձանց (փրկարարներ և այլն) սոցիալ-հոգեբանական նվազեցված խոցելիությունը | 3.11.1. Միջոցառում 1<br><br>Աղետների նկատմամբ բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիության բնագավառում համաշխարհային փորձի վերլուծություն | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԿԳՆ, |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | 3.11.2. Միջոցառում 2<br><br>«Բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիություն» թեմայով ուսումնական ձեռնարկի մշակում և տեղեկատվության հավաքման համակարգում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱԻՆ ՊՈԱԿ, ՀՀ ԿԳՆ, Հ |
| | | 3.11.3. Միջոցառում 3<br><br>Սթրեսի հաղթահարման և տեղական պայմաններին հարմարվելու ծրագրի մշակում | ՀՀ ԱՆ, ՀՀ ԱԻՆ, Հ ԱԻՆ «ՃԿՊԱ» ՊՈ |
| | | 3.11.4. Միջոցառում 4<br><br>Աղետների նկատմամբ բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիության ուսումնական ծրագրի ներդրում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ ԱԻՆ ՊՈԱԿ , ՀՀ ԿԳՆ, Հ |
| | 3.12. Արդյունք 12 Հայաստանի Հանրապետության տարածքում սեյս-միկ ռիսկի նվազեցման ստեղծված իրավական հիմք | 3.12.1. Միջոցառում 1<br><br>Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման վերաբերյալ գործողությունները կանոնակարգող նորմատիվ ակտերի (փաստաթղթերի) մշակում և հաստատում | ՀՀ ԱԻՆ, ՀՀ մար պետարաններ,<br><br>ՀՀ համայնքներ<br><br>(համաձայնությ |

Պետական ծրագրում ներառված հապավումները՝

ՀՀ ԱԻՆ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

ՀՀ ՔԿ - Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀՀ ԱՆ - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

ՀՀ ՏԿՏՏՆ - Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՀՀ ԷԵԲՊՆ - Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

ՀՀ ՖՆ - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

ՀՀ ԿԳՆ - Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

ՀՀ ՏԿԶՆ - Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

ՀՀ ԲՆ - Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն

ՀՀ ԳՆ - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն

ՀՀ ԱԻՆ ՍՊՏԾ ՊՈԱԿ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՀՀ ԱԻՆ ՓԾ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն

ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ ՊՈԱԿ – Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՀՀ ԱԻՆ ՃԿԱԿ – Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն

ՀՀ ԱԻՆ ԱԲՏԿ ՊՈԱԿ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Աղետների բժշկության

տարածաշրջանային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա

ՀԱԷԿ - Հայկական ատոմային էլեկտրակայան

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2018 թվականի

______ N ___ որոշման

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական ու մարզային ծրագրերի իրականացումը, կարգավորվում են սեյսմիկ պաշտպանության բնագավառում Պետական ծրագրով նախատեսված սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների համակարգմանը և վերահսկմանն առնչվող պետական կառավարման համակարգի մարմինների (ներառյալ մարզպետարանների) ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների միջև լիազորությունների տարանջատման, ինչպես նաև նրանց համագործակցության հարցերի հետ կապված հարաբերությունները:
2. Սեյսմիկ ռիսկի նվազեցումն իրականացվում է Պետական ծրագրի դրույթներին համապատասխան:

Սեյսմիկ ռիսկի նվազեցման մարզային և համայնքային ծրագրերը հանդիսանում են ՀՀ մարզերի և ՀՀ համայնքների զարգացման ծրագրերի անբաժանելի մասը և իրականացվում են ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի  N 1351–Ն որոշման համապատասխան: /Նախաբանում օրենքի հղում  չունի ..այս որոշումը/

3. Պետական կառավարման համակարգի մարմիններն ու կազմակերպություններն (համաձայնությամբ) իրենց ամենամյա պլաններում՝ համաձայն Պետական ծրագրի, ներառում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ:
4. Սեյսմիկ ռիսկի նվազեցման մարզային, համայնքային, պետական

կառավարման համակարգի մարմինների և կազմակերպությունների ծրագրերը հանդիսանում են Պետական ծրագրի ենթածրագրեր:

5. Պետական ծրագրի և ենթածրագրերի կատարման համակարգող լիազոր մարմինը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է: Պետական ծրագրի և ենթածրագրերի կատարման վերահսկումն իրականացվում է սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների կատարման մշտադիտարկմամբ:
6. Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների սեփականատերերը պատասխանատու են օբյեկտների սեյսմակայունության ապահովման և աշխատակիցների անվտանգության համար: /Օբյեկտների ցանկը սահմանված է՞՞ Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն Լիազոր մարմինն է հաստատում, պատասխանատվության ռիսկը  24 հոդվածով է նախատեսված/
7. Սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները ներառում են սեյսմիկ ռիսկի գնահատումը, սեյսմիկ ռիսկի գնահատման արդյունքում խոցելի կառույցների առանձնացումը և դրանց սեյսմիկ խոցելիության նվազեցման՝ սեյսմակայունության ապահովման պլանավորումն ըստ առաջնահերթությունների:

1. ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

8. Սեյսմիկ ռիսկի նվազեցման համակարգը ընդգրկում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինները (ներառյալ մարզպետարանները)՝ ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով հանձնարարված գործառույթների մասով, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները՝ ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունների պահանջով, հասարակական կազմակերպությունները (համաձայնությամբ), այլ կազմակերպություններ (համաձայնությամբ) և քաղաքացիներ (համաձայնությամբ), որոնց գործողությունները սեյսմիկ պաշտպանության ոլորտում համակարգում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ ի դեմս սեյսմիկ պաշտպանության ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության:
9. Պետական ծրագով նախատեսվող միջոցառումներից, ըստ գործառույթների, ներառվում են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության պետական ոչ առևտրային կազմակերպության ամենամյա պլանում:
10. Սեյսմիկ ռիսկի նվազեցման ծրագրերը կատարող պետական կառավարման համակարգի մարմինները (ներառյալ մարզպետարանները /պետական կառավարման համակարգի մարմիններ չեն/) սույն հավելվածի 16-րդ և 24-րդ կետերում նշված ժամկետներում, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն են ներկայացնում տեղեկատվություն իրենց կողմից նախատեսվող և իրականացված միջոցառումների մասին:
11. Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ, կարևոր և ընդհանուր

նշանակության օբյեկտների սեյսմակայունության ապահովումն իրականացվում է սեփականատերերի և օրենքով չարգելված միջոցներով:

12. Սեյսմիկ ռիսկի գնահատումներ սահմանված կարգով կարող են իրականացնել շահագրգիռ մարմինները և կազմակերպությունները, օրենսդրությամբ սահմանված կարգով դրանք ներկայացնելով լիազոր մարմնին՝ հաստատման և առկա տվյալների բազան համալրելու համար:
13. 13. Սեյսմիկ ռիսկի նվազեցման վերաբերյալ առկա անհրաժեշտ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները միմյանց տրամադրում են անվճար:

- ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

14. Բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացումը, պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների նախապատրաստումը սեյսմիկ ռիսկի կառավարմանը, անձի հոգեբանական խոցելիության նվազեցումը, բժշկական պատրաստվածության բարձրացումը բժշկական կազմակերպությունների պատրաստվածության և ազգաբնակչության առաջին օգնության գիտելիքների իմացության մակարդակի բարձրացումը, մասնագիտական փրկարարական նյութատեխնիկական բազայի զարգացումն իրականացվում է համաձայն Պետական ծրագրի ժամանակացույցի:
15. Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ռիսկի նվազեցման ծրագրերի իրականացումը զուգորդվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշմամբ նախատեսված ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպմամբ:
16. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինները, համաձայն Պետական ծրագրի, մասնակցում են սեյսմիկ ռիսկի նվազեցմանն առնչվող համապատասխան տվյալների բազայի ստեղծման և/կամ մշակման աշխատանքներին. աշխատանքային կարգով ճշտվում են տրամադրվող կամ ստացվող տվյալների ցանկը և փոխանցման եղանակը: Սույն որոշման 2-րդ հավելվածի ժամանակացույցով չսահմանված դեպքերում անհրաժեշտ տեղեկատվության փոխանցումը կամ հանձնումը լիազոր մարմնին կատարվում է մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը:
17. Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները մարզային և համայնքային զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներն ընդգրկում են երկու փուլով.

1) առաջին փուլ՝ բնակչության ուսուցում, պետական կառավարման և

տեղական ինքնակառավարման մարմինների նախապատրաստում, մարզերի և համայնքների սեյսմիկ ռիսկի (ներառյալ շենքերի ու շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի) գնահատման աշխատանքներ,

2) երկրորդ փուլ՝ շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ:

18. Սեյսմիկ ռիսկի գնահատման մարզային ծրագիրը մշակվում է համայնքային ծրագրերի հաշվառմամբ.

1) սեյսմիկ ռիսկի գնահատումը համայնքների համար կարող է իրականացվել առանձին համայնքի համար կամ համայնքների խմբի համար՝ մարզային միջոցառումների ծրագրում,

2) ՀՀ համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն և ՀՀ համապատասխան մարզպետարան ներկայացված հայտերի հիման վրա մշակվում է սեյսմիկ ռիսկի գնահատման համայնքային և մարզային ծրագիրը,

3) սեյսմիկ ռիսկի գնահատման մարզային ծրագիրը, որոշակի համայնքների ընդգրկմամբ, կարող է իրականացվել տարբեր ժամկետներում: Սեյսմիկ ռիսկի գնահատման մարզային և համայնքային ծրագրերը օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատվում են մարզային և համայնքային զարգացման ծրագրի կազմում:

19. ՀՀ համայնքների, համայնքների խմբի, մարզերի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը մշակելու նպատակով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի թիվ 598 հրամանով հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմված հայտ ու քարտեզի կազմման տեխնիկական առաջադրանք: Աշխատանքների կատարման ֆինանսական ապահովման առկայությամբ հայտարարվում է աշխատանքների իրականացման մրցույթ:
20. Սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների երկրորդ փուլն իրականացվում է լիազոր մարմնի կողմից սեյսմիկ ռիսկի սահմանված կարգով հաստատված քարտեզներին առդիր ներկայացվող առաջարկությունների և այլ հետազոտությունների հաշվառմամբ:

Արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ իրականացնելու համար, տարածքների խոցելիության նվազեցման վերաբերյալ առաջարկությունների հիման վրա, ՀՀ մարզերի և համայնքների զարգացման ծրագրերում ընդգրկվում են սեյսմիկ ռիսկի նվազեցման կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ ծրագրեր, ներկայացվում են լիազոր մարմին՝ համաձայնեցման:

21. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը համապատասխան մարզպետարանի հետ մշակում է սեյսմիկ ռիսկի նվազեցման երկրորդ փուլի՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության նվազեցման

աշխատանքների ծրագիր և ներկայացնում ՀՀ կառավարության հաստատմանը:

ՀՀ կառավարության կողմից օբյեկտների սեյսմիկ խոցելիության նվազեցման հաստատված ծրագրերը ներառվում են մարզային և համայնքային զարգացման ծրագրերում:

22. ՀՀ համայնքները զարգացման ծրագրերով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների մասին յուրաքանչյուր տարի, այնուհետ կատարված աշխատանքների վերաբերյալ մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը, տեղեկատվությունը ներկայացնում են ՀՀ մարզպետարան: ՀՀ մարզպետարանները մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը համայնքներից ստացված մարզային ամփոփ տեղեկատվությունը, աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հայտերի հետ, ներկայացնում են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, որը սույն ընթացակարգի 16-րդ կետում նշված ժամկետում մարզերից ստացված ամփոփ տեղեկատվությունը ներկայացնում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն:
23. ՀՀ մարզպետարանի, ՀՀ համայնքապետարանի և օբյեկտների սեփականատերերի կողմից մշակվում են սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման միջոցառումների ճյուղային, պետական նպատակային, մարզային և համայնքային ժամանակացույցեր, որոնք ներառվում են համապատասխան զարգացման ծրագրերում:
24. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը.

1) Պետական ծրագրով նախատեսվող միջոցառումները, ըստ առաջնահերթությունների, ներառում է սեյսմիկ պաշտպանության պետական ոչ առևտրային կազմակերպության ամենամյա պլանում, սահմանված կարգով մասնակցում է սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների կազմման մրցույթներին,

2) վերահսկում է սույն հավելվածի 16-րդ և 24-րդ կետերում բերված ժամանակացույցերի կատարումը,

3) սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմման հարցերով համագործակցում է ՀՀ մարզերի և համայնքների հետ, ՀՀ մարզերին և համայնքներին տրամադրում է սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմման հայտի և տեխնիկական առաջադրանքի օրինակելի ձևերը, հաստատում է սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզները,

4) սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների հիման վրա ՀՀ մարզերին և համայնքներին ներկայացնում է սեյսմիկ խոցելիության նվազեցման առաջարկություններ, համաձայնություն է տալիս սեյսմակայունության ապահովման միջոցառումների ճյուղային, պետական նպատակային, մարզային և համայնքային կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերին:

25. ՀՀ քաղաքացիները, հասարակական և այլ կազմակերպությունները սեյսմիկ ռիսկի նվազեցման հարցերով համագործակցում են լիազոր մարմնի հետ և իրականացնում են սեյսմիկ պաշտպանության միջոցառումներ (համաձայնությամբ):
26. ՀՀ բոլոր մարզերի և գերատեսչությունների ներկայացրած տեղեկատվությունը ներառվում է սեյսմիկ ռիսկի նվազեցման կարճաժամկետ ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման վերաբերյալ Ազգային Ժողովի նիստում սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիազորված մարմնի ղեկավարի ամենամյա հաղորդումում: